ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վեհափառ Հայրապետը մայիսի 6-ին բարեհաճեց մեկնիլ Ս. Էջմիածնից Երևան և այնտեղից Աղեքսանդրապոլ օգափոխութեան համար, որտեղից վերադարձաւ մայիսի 11-ին։ Նորին սրբութեան ուղեկցում էին Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանը և պ. Խորէն Խրիմեանը։

Վեհափառի կողմից Կովկասի Փոխարքայ Պայծառափայլ կոմս Վարանցով Դաշկովին բարի գալուստ մաղթելու համար թիֆլիզ ուղարկուեց յատուկ պատգամաւորութիւն երեք հոգուց՝—Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանից, Սինոդի անդամ Յուսիկ վարդապետից և Խորէն վարդապետ Մուրադբէկեանից,

---

Որովհետև նշանակուած ժամանակամիջոցում տկարութեան պատճառով չկարողացաւ իւր պաշտօնավայրն երթալ Ատրպատականի առաջնորդ ընտրուած Տ. Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեանը, ուստի Վեհափառ Հայրապետը հրամայեց թեմական ժողովին կատարել առաջնորդական նոր ընտրութիւն։

Մայիսի 10-ին Հին Նախիջևանում տեղի ունեցած տխուր դէպքերի առթիւ այնտեղ մեկնեց Երևանի վիճակի Փոխանորդ Տ. Կարապետ վարդապետը։

Պետերբուրգից Մայր Աթոռ վերադարձաւ Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանը, որը կալուածական դատի պաշտպանութեան համար Բեսսարաբիայի Առաջնորդ դերապատիւ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի հետ Վեհափառ Հայրապետի կողմից ուղարկուած էր յատուկ պատգամաւորութեամբ։

Թաւրիզից Ս. Էջմիածին վերադարձաւ Սինոդի անդամ տ. Մատթէոս վարդապետը, որն ուղարկուած էր պատուիրակ առաջնորդական ընտրութեանց համար և նախագահեց Բարդուղիմէոս սրբազանին ընտրող ժողովներին։

Մայիսի 8-ին Մայր Աթոռից գնաց հայրենիք՝—Ղարաբաղ՝ Մակար եպիսկոպոս Բարխուդարեանը։

Աքսորից արձակուեցան և վերադարձան Սահակ և Ղուկաս վարդապետները։

Կազմուեց նոր Վանական կառավարութիւն, որին նախագահ նշանակուեց տէր Ղեւոնդ եպիսկոպոս, իսկ անդամներ—Համազասպ և Տաճատ վարդապետներ։

ՏԱՃԿԱՀԱՅՐ

Ալեքսի մէջ կարդում ենք. «Վեհ. Կայսրն, ինչպէս ամէն տարի, այս տարի այլ բարեհաճած է 50,000 ղուրուշ շնորհել աղգ. Պատրիարքարանի պէտքերուն համար։ Կայս. այս բարեգթութիւնը Պատրիարքարանի պաշտօնէութեան երախտագիտութեան և բարեմաղթութեանց անգամ մը ևս առիթ ըլլալով, ս. Պատրիարքը շնորհակալութեան ուղերձ մը պիտի մատուցանէ յոտս գահոյից Ն. Կայսր. Վեհափառութեան։

«Ս. Պատրիարք Հայրը՝ Պատրիարքարանի ընդունելութեան դահլիճը հին պատրիարքներու պատկերներով զարդարելէն զկնի, հիմակ ալ հին պատրիարքներու ժողովրդեան ուղղած կոնդակներէն պատրիարքարան մնացած հաղուագիւտ օրինակներն անկորուստ պահելու համար, շրջանակներու մէջ անցընել